# Հաշվետվություն

1. *Անունը, Ազգանունը*
   Դավիթ Սահակյան

2. *Զբաղեցրած պաշտոնը*
   ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. *Գործուղման վայրը և ժամկետները*
   Մոսկվա՝ 2017 թվականի հունիսի 28-ից 29-ը

4. *Հրավիրող կողմը*
   Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)

5. *Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը*)
   Գործուղման նպատակն էր մասնակցել ԱՊՀ երկրներում ֆինանսական կրթության տեխնիկական աջակցության նախագծի գործարկմանը նվիրված կլոր սեղանին՝ կազմակերպված Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից (OECD)՝ Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության հետ համագործակցությամբ:

6. *Քննարկված թեմաները*
   Կլոր սեղանին մասնակցել են բարձր մակարդակի պատվիրակներ 6 երկրներից՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան: Համակազմակերպչի կարգավիճակով մասնակցում էր Ռուսաստանի Դաշնության պատվիրակությունը:Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում ընդգրկված են եղել նաև ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կարեն Թամազյանը և ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի անդամ Արմենակ Դարբինյանը:

   Միջոցառման օրակարգում էր՝տեխնիկական աջակցության նախագծի մեկնարկի պաշտոնական ազդարարումը, մասնակից երկրների միջև փորձի փոխանակումը, յուրաքանչյուր երկրի աշխատանքային ծրագրի ներկայացումն ու քննարկում, հետագա միջոցառումների ու հանդիպումների պլանավորումը:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

   Միջոցառումը պաշտոնապես ազդարարեց ֆինանսական կրթության տեխնիկական աջակցության նախագծի մեկնարկը:

Կլոր սեղանը առաջին հարթակն էր որտեղ հնարավոր դարձավ մասնակից երկրների միջև  փորձի փոխանակումը: Յուրաքանչյուր պատվիրակություն, այդ թվում Ռուսաստանը, ներկայացրեց իր երկրի անցած ճանապարհը: Հայաստանի պատվիրակության ներկայացումը, մասնավորապես, անդրադարձ կատարեց հետևյալին.

- Ֆինանսական կրթության զարգացման առանցքային կետերը,
- Ընթացիկ ծրագրերը (1. դպրոցական կրթություն, 2. ֆինանսական կրթություն գյուղաբնակների համար, 3. ազդեցության գնահատում ),
- Դպրոցական ծրագրի կառուցվածքն ու առանձնահատկությունները,
- Ֆինանսական կրթության այլ ծրագրերը,
- Ապագա պլաններ և խնդիրներ:

Հանդիպման աշխատանքային հատվածում ներկայացվեցին և քննարկվեցին յուրաքանչյուր  երկրի գործողությունների ծրագրերը:

8. *Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը*

Պաշտոնապես ազդարարվեց ֆինանսական կրթության տեխնիկական աջակցության նախագծի մեկնարկը, ևս մեկ անգամ ընդգծվեց ֆինանսական կրթության կարևորությունը տարածաշրջանի համար, բարձր մակարդակով ամրագրվեց քաղաքական աջակցությունը նախագծին:

Քննարկվեցին և հաստատվեցին մասնակից երկրների գործողությունների ծրագրերը (լրամշակման վերջնաժամկետ սահմանվեց հուլիսի 21-ը):

Համաձայնեցվեց տեխնիկական աջակցության նախագծի հետագա ընթացքը. որոշվեց հաջորդ հանդիպումն իրականացնել Մինսկում ս.թ. սեպտեմբերի 19-20-ը: Քննարկվեց և նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց 2018թ.-ի աշխատանքային հանդիպումը Երևանում կազմակերպելու վերաբերյալ:

9. *Գործուղվողը*
ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյան

10. *Ստորագրությունը, ամսաթիվը*
04.07.2017